378(47.93)
Ц-45

ПРОФЕССОР ԿԵՐԵՊՅԱՆ ԷԼԵՋԻՆԵՐՆԵՐ

ՆԱԽԱԳԻԾ
ԱՄԵՐԻԿԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

1919

Нахичевань н-Д.
Типог. С. Я. АВАКОВА

Ա-45
ԱԹ.

ՊՐՈՖԵՍՈՐ ԿԵՐԲԱՅԻ ԱՂԱՋԱՆՅԱՆՑ

ՆԱԽԱԳԻԾ
ԱՄԵՐԻԿԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

10
1005/
6999

Նոր-Նախիջևան
Տպարան Ս. ԱՒԱԳԵԱՆԻ

Нахичевань н-Д.
Типог. С. Я. АВАКОВА

1919

ռ 5 .02. 2013

54.282

ՊՐՈՖԵՍՈՐ ԿԱՐԳԵՏ ԱՂԱՋԱՆԵՎԱՆԻ

ՆԱԽԱԳԻԾ ԱՄԵՐԻԿԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

Հայ ժողովրդի դարաւոր պատմական իդեալը իրականութիւն է դառնում. անթիւ, անհամար անմեղների արիւն-արցունքը և ազնիւ, քաջարի մարտիկների մղած հերոսական պայքարը վարձահատոյց է լինում։ Մի, անբաժան ու գերիշխան Հայաստանի գաղափարը ոչ միայն ազգային, այլ և միջազգային փաստ է դառնում։

Ներկայ հայ սերնդին անօրինակ դեր է վիճակուում՝ —ոչ միայն վայելել փառքն ու երջանկութիւնը ազատ Հայրենիքի, այլ և հիմքերը կառուցանել ու երաշխաւորել Հայրենիքի ինքնօրէն, յարատև գոյութեան, յառաջադիմութեան։ Մենք պատասխանատուութեան զգացմունքն ենք ունենալու ոչ միայն գալոց սերնդների հանդէպ, այլ և այն Նորահրաշ պատկաւորների, որոնք իրանց առաքինի կեանքը ողջակիզեցին Հայ Ազգի փրկութեան, Հայ Հայրենիքի Ազատագրութեան համար։

Հայաստանի Հանրապետական Կառավարութիւնը և Ազգային պատիրակութիւնը կերմարդկային ջանքեր են թափում Հայ Դատը պաշտպանելու, Մանուկ Հանրապետութեան գոյութիւնը ապահովելու։

Պետութեան և պետականութեան հիմքը ազգը, ժողովուրդն է կազմում, առաւել ևս նորակազմ ժողովրդապետութեան: Հայ ժողովուրդը, հասարակութիւնը ևս լարելու է իր բարոյական ուֆիզիկական բովանդակ կարողութիւնը, որպէսզի Հայաստանի Հանրապետական կառավարութիւնը կարող հանդիսանայ պատուով դուրս գալ պատմական այս աննախընթաց փորձութիւնից:

Մեծ է Նամանաւանդ հայ մտաւորականութեան պատասխանատուութիւնը, որ կոչում ունի բարոյական դեկավարը հանդիսանալու իր Ազգի ու Հայրենիքի: Ահա այդ մտայնութեան արգասիք է և Ամերիկա-Հայկական Համալսարանի ծրագիրը, որ մշակել ու ներկայացրել ենք Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգների արտաքին գործոց սուտս-սեկրետարին:

Վերածնող մեր Մայր Հայրենիքի գոյութեան և յառաջադիմութեան համար անհրաժեշտ է ոչ միայն արտաքին ապահովութիւն ու զինուորական ոյժ, ոչ էլ նոյն իսկ միայն ներքին տնտեսական ու իրաւական բարեկեցութիւն, այլ նաև հայ ազգի մտաւոր-բարոյական և քաղաքացիական դաստիարակութիւնը: Աւելին ևս՝ այդ դաստիարակութիւնը անհրաժեշտ նախապայմանն է արտաքին ապահովութեան ու ներքին բարեկեցութեան:

Այդ նպատակին հասնելու համար անհրա-

ժեշտ է՝ անկախ դպրոցական ու արտադպրոցական ընդհանուր ծրագրից, ընթացիկ գործունէութիւնից՝—այժմեանից հէնց լուրջ բայլեր անել հիմնելու Հայաստանում հերոսական-ամերիկան տիպի մի մեծ Համալսարան, որ նախ իր կազմակերպութեամբ լինէր միանգամայն ինքնօրէն ու ազատ ընթացիկ քաղաքական կուսակցութիւններից, պարլամենտական յուզումներից և երկրորդ՝ ֆինանսական ապահովութեան տեսակէտից կարող հանդիսանար բաւարարել ուսուցչարանական, վարչական ամենամեծ պահանջներին իսկ: Հայ ազգային իշխանութիւնը առաջին նուագ տալուց հետ երկրի ու ժողովրդի բազմաթիւ կարիքների մատնոցութեամբ և շնորհիւ իր ֆինանսական, կուլտուրական, քաղաքական ու կազմակերպչական ծանր կացութեան՝—անկարող է լինելու կառուցանել այդպիսի մի Համալսարան: Մինչդեռ նման Համալսարանը ապագայում աղքիւր կը հանդիսանար նաև հայ գիտական ոյժերը մատակարարելու մեր այլ համալսարանների համար ևս:

Այդպիսի մի Համալսարան կառուցանելու առաւելներ ունեն միայն մեծ պետութիւնները, որոնց շարքերից նախապատուութիւնը տալիս ենք նախ՝ որովհետև այդ պետութիւնը ունի աւելի, քան մի այլ երկիր վերյիշեալ ֆինանսական,

կազմակերպչական առաջնորդը և երկրորդ՝—Հայ դեկավար շրջանները, ժողովուրդն ու Ազգային Պատուիրակութիւնն ևս տրամադիր են Հայաստանի վերին հովանաւորութեան խնդրում՝ գերագոյնութիւնը տալ Միացեալ Նահանգներին։

Ամերիկա-հայկական Համաշխարհի նախագիծը թէև արդիւնք է մեր անհատական նախաձեռնութեան, սակայն ենթարկուած է Նոր Նախիջևանի ականաւոր հայ գործիչների նախնական քննութեան։ Աւելին ևս՝ հաղորդակցութեան ներկայ պայմաններում զրկուած Ազգային Իշխանութեան դիմելու հնարաւորութիւնից՝—մեր ծրագիրը խորհրդածութեան նիւթ հանդիսացաւ այնպիսի մի հեղինակաւոր ազգային մարմնի, որպիսին Նոր Նախիջևանի Հայ Համայնական Խորհուրդն է։ Խորհրդի նախնական հաճութիւնը ստանալուց յետոյ միայն՝ մեզ իրաւունք համարեցինք Ռոստովի Ֆրանսիական հիւպատոսարանի բարեհաճ աջակցութեամբ ներկայացնել մեր ծրագիրն ընդարձակ ու պատճառաբանեալ դեկուցագրով հանդերձ՝ Միացեալ Նահանգների արտաքին գործոց ատատա-սեկրետարին՝ հայերէն ու անգլիերէն լեզուներով։

Միաժամանակ պատշաճ դիմում կատարեցինք Ազգային Պատուիրակութեան մեծանուն Նախագահ Նորին վսեմափայլութիւն Պօղոս Նուբար փաշային՝ գրութեանս կցելով նաև ծրագիրը։

Ներկայ հրատարակութեամբ մեր պատասխանատու հասարակական շրջանների սեպհականութիւնն ենք դարձնում Ամերիկա-հայկական Համաշխարհի ծրագիրը՝ մէջ բերելով միաժամանակ Նոր Նախիջևանի Համայնական Խորհրդի 1919 թ. փետրուարի ութսի պաշտօնական արձանագրութիւնից համապատասխան քաղուածքը։

Ամեն մի հայ իր կոչման ու կարողութեան սահմանում աշխատանք է թափելու Հայրենիքի ու Ազգի վերածնդին՝—այդ գիտակցութեան արտայայտութիւն է մեր ծրագիրը։

Ամեն մի ազգային-հասարակական ձեռնարկութիւն՝ յայտնի է լինելու հասարակութեան-ժողովրդին՝—այդ գիտակցութեան արդասիք է ներկայ հրատարակութիւնը։

Պրոֆ. Կ. Աղաջանեան

Նոր Նախիջևան
10 Ապրիլի 1919 թ.

I.

ԱՄԵՐԻԿԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԾԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1. Ամերիկա-հայկական Համալսարանը ունենալու է հետևեալ հիմնական ֆակուլտետները իրանց բաժանումներով—

1. *Բժշկական*
   - ա. բժշկական
   - բ. դեղաբանական
   - գ. ատամնաբուժական
   - դ. ֆելդշերական
   - ե. գթութեան քոյրերի ընթացքներ
2. *Իրաւաբանական—հասարակագիտական*
   - ա. իրաւաբանական
   - բ. հասարակագիտական—տնտեսագիտական
   - գ. տեղական ինքնավարութեան և կօոպերացիայի
3. *Փիզիկա-մաթեմատիկական*
   - ա. բնագիտական
   - բ. մաթեմատիկական

4. *Պատմական-լեզուաբանական ու փիլիսոփայական*
   - ա. պատմական-լեզուաբանական
   - բ. փիլիսոփայական—մանկավարժական
   - գ. արևելագիտական
5. *Պոլիտեխնիկում*
   - ա. մետալուրգիական (горный)
   - բ. տեխնոլոգիական
   - գ. գիւղատնտեսական և անտառաբանական
   - դ. ճարտարապետական
   - ե. ճանապարհների հաղորդակցութիւն (путей собщенія)

Ֆակուլտետային առարկաների կազմակերպութեան և դասաւանդութեան խնդիրները նիւթ կլինեն Համալսարանի Կանոնադրութեան։ Սակայն այժմէն իսկ անհրաժեշտ կհամարենք յիշատակել, որ Համալսարանի Իրաւաբանական բաժնում յատուկ ամբիոններ են լինելու Հ. Ա. Միացեալ Նահանգների իրաւունքի պատմութեան ու դոգմայի, իսկ պատմա-լեզուաբանական ֆակուլտետում՝—Հ. Ա. Միացեալ Նահանգների պատմութեան, գրականութեան և անգլիերէնի։ Իսկ արևելագիտական բաժնում, որ թէ մեր Հայրենիքի և թէ Ամերիկայի գիտանագիտական հիւսիսպատասական գործունէութեան համար արժէքաւոր է՝ կդասաւանդուեն նաև առարկաներ, որ կա-

բող են նախատեսված չլինել կանոնադրութեամբ։

2. Համալսարանին առընթեր լինելու է 6—8 տ. ընթացքով կուլէջ-գիմնազիան, որտեղ դասաւանդելու է միջնակարգ դպրոցի ընթացք հայերէն լեզուով և որպէս դասաւանդութեան պարտադիր առարկաներ՝ անգլիերէն ու ֆրանսերէն։ Այս կուլէջը հանդիսանալու է նախատիպար Հայաստանում բացուելիք մասնաւոր թէ պետական միջնակարգ դպրոցների, երկրորդ՝—պատմափիլիսոփայական ֆակուլտետի մանկավարժական բաժնի հատուկ փորձնական դպրոց և երրորդ որ՝ գլխաւորն է՝ Համալսարանի համար պատրաստելու է այն հիմնական, որոշ աւանդներով համակուած կորիզ-ուսանողութիւնը, որի շուրջն է հաւաքուելու և ուսանողութեան մնացեալ մասը։ Այս կուլէջը կարող է ունենալ նաև իր նախապատրաստական բաժինները և կամ թէ չէ սանները կարող է ընդունել հայկական տարրական դպրոցներից։

3. Ամերիկա-հայկական համալսարանը լինելու է միանգամայն ինքնօրէն և գտնուելու է ընդհովանաւորութեան Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգների և Հայաստանի Հանրապետութեան պ.պ. նախագահների։

Համալսարանի անմիջական կառավարութեան բարձրագոյն իշխանութիւնը հանդիսանալու է Համալսարանական Հոգաբարձութիւնը ընդ նախագահութեամբ Ամերիկական Հայաստանի կառավարութեան առընթեր դեսպանի և փոխնախագահութեամբ՝ Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան ներկայացուցչի։ Հոգաբարձութեան անդամներն են համարուում՝—ա. Համալսարանի վերատեսուչը, բ. Ամերիկայի դեսպանութեան 3 ներկայացուցիչները, գ. Հայաստանի արտաքին գործոց և լուսաւորութեան նախարարութեանց 1-1 ներկայացուցիչներ, դ. Հայաստանի պարլամենտի նախագահը և Համալսարանի ֆակուլտետների դեկանները։

4. Համալսարանի ուսումնարանական ու վարչական կառավարութիւնը գտնուում է վերատեսչի, Համալսարանական Խորհրդի, ֆակուլտետային ժողովների, դեկանների և վարչութեան ձեռքին։ Այս մարմինների ու պաշտօնէութեան իրաւասութեանց շրջանակը ընդգծուած ու սահմանած է լինելու Համալսարանի կանոնադրութեան մէջ։

5. Ամերիկա-հայկական Համալսարանի ֆինանսական հոգատարութիւնը վերցնելու է Ամերիկայի կառավարութիւնը, որին և ներկայացուում է Հ. Հոգաբարձութեան նախագահ դեսպանի ձեռօք Համալսարանի տարեկան հաշուետուութիւնը՝ ինչպէս ֆինանսական, նոյնպէս ուսումնական-վարչական դրութեան։ Իսկ դասաւանդութիւնն

ու ամբողջ գործավարութիւնը լինելու է հայերէն լեզուով։

6. Ամերիկա-հայկական Համալսարանը և ուսանողութիւնը օգտուում են այն բոլոր հնարաւոր իրաւունքներով, ինչ որ Հայաստանի կառավարութեան հիմնած պետական համալսարաններն ու. ուսանողութիւնը։

7. Ամերիկա-հայկական Համալսարանի անդրանիկ վերատեսուչը հրաւիրում է Ամերիկայի Հայաստանի կառավարութեան ասնքիր դեսպանութեան միջոցով 5 տարի ժամանակամիջոցով՝ հաշուելով ժամանակաշրջանը Համալսարանի բոլոր ֆակուլտետների գործունէութեան ուսումնական տարեանից։

8. Վերատեսուչը պատասխանատու է և գործադրող ներկայ Համալսարանական նախագծի և միաժամանակ անմիջական վարիչը համալսարանական գործերի. մինչև որ ընտրի շտատով նախատեսնուած պրոֆեսորական կազմի $\frac{1}{3}$։

9. Պրոֆեսորական նորմալ շտատը լրանալուց յետոյ միայն պրոֆեսորական Խորհրդին ու ֆակուլտետային ժողովներին վերապահուում է իրաւունք նոր պրոֆեսորներ հրաւիրելու, իսկ մինչ այդ՝ պրոֆեսորներ հրաւիրում է Համալսարանական Հոգարարձութիւնը վերատեսչի առաջարկութեամբ։

10. Անդրանիկ վերատեսուչը՝ Ամերիկայի կառավարութեան միջոցներով և Հայաստանի արտաքին գործոց նախարարի և Ամերիկական

Հայաստանի կառավարութեան առընթեր դեսպանի հետ միասին՝

ա. Մշակելու է Ա. Հ. Համալսարանի վերջնական կանոնադրութիւնը։

բ. Կազմելու է պատշաճաւոր շտատը և հրաւիրելու գիտական ոյժեր։

գ. Հիմնելու է գրադարանը, լաբորատորիաները, կաբինետները և այլն։

դ. Ուղարկելու է արտասահման և յատկապէս Ամերիկա պրոֆեսորութեան պատրաստելու համար համալսարանաւարտ կարող ոյժեր.

ե. Հրատարակելու է ինքնուրոյն թէ թարգմանական գիտական դասագրքեր, մենագրութիւններ և այլն.

զ. Հայաստանի միջազգային վերջնական կազմակերպութիւնից և մայրաքաղաքը որոշելուց յետոյ՝ ձեռնարկելու է վերջնուսմս կառուցանել Համալսարանի շէնքը՝ ամերիկա-եւրոպական համալսարանական շէնքերի բոլոր պահանջների համաձայն.

է. Հրաւիրած գիտական ոյժերի ու միջոցների համեմատ էլ աստիճանաբար բաց է անելու համապատասխան ֆակուլտետները.

ը. Եւ ընդհանրապէս ձեռնարկելու է այն բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են մեր ծրագրած տիպի համալսարանի գոյութեան համար, հրաւիրելով է դէպ հարկի ամեն կարիքի ու պահանջի համեմատ գիտական-մասնագիտական ոյժեր։

———

II.

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԵՒ ԱՄԵՐԻԿԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԻԾԸ

(Քաղուածք Խորհրդի 1919 թ. փետրուարի 7-ի նիստի պաշտօնական արձանագրութիւնից)

1919 թ. փետրուարի 7-ին կայացաւ Նոր Նախիջևանի Հայ Համայնական Խորհրդի նիստը։ Նախագահում է Խորհրդի նախագահ Ռուբէն Բեր-բերեանը։

Նախագահը, բանալով ժողովը, յայտնում է օրակարգը.—

ը. Համայնական Խորհրդի անդամ պրոֆեսոր Կարապետ Աղաջանեանի զեկուցումը Ամերիկա-Հայկական Համալսարանի ծրագրի մասին...

Ժողովն անցնում է օրակարգի երկրորդ հարցի քննութեան։ Զեկուցանում է պրոֆեսոր Աղաջանեանը*)։

Ժողովը մեծ խանդավառութեամբ և բուռն ծափահարութիւններով ընդունում է պրոֆ. Աղաջանեանի զեկուցումը և փոխ նախագահ Հ. Տերտերեանի**) առաջարկու-

*) Զեկուցմանս հիմքը կազմում էր ներկայ տպագիր նախագիծը, ուստի և կրկնութեան մէջ չմտնելու համար աւելորդ ենք համարում մէջ բերել, աւելի ևս, որ Խորհուրդը առանց վիճաբանութեան ու միաձայն հաւանութիւն տուց։

**) Հ. Յ. Դաշնակցութեան ներկայացուցիչ։

թեամբ ընդունում է միաձայն պրեզիդիումի և վարչութեան կազմած հետեւեալ բանաձևը.—

«Նոր-Նախիջևանի Հայոց Համայնական Խորհուրդը, որ ազգային բարձրագոյն իշխանութիւնն է Նոր-Նախիջևանի և Ռոստովի Հայկական մեծ գաղութի և ընարուած ընդհանուր ընտրողական սիստեմով՝—իւր 1919 թ. փետրուարի 7-ի նիստում քննութեան առնելով Համայնական Խորհրդի անդամ և Դոնի Մեծ Զօրաց երկրի պետական համալսարանի օրդինար պրոֆեսսոր Կարապետ Աղաջանեանի զեկուցումը—ծրագիրը և ի նկատի առնելով հայազգի գիտնականի գիտական հեղինակութիւնն ու վարչական կազմակերպչական ընդունակութիւնը, որ մինչև այժմ գործ էր դրուած ռուսական պետական համալսարանների բարգաւաճման, միաձայն որոշեց՝—ողջունել այդ մեծ և խրախոյսի արժանի նախաձեռնութիւն—ծրագիրը, որ նպատակ ունի զարկ տալ ազատագրուող հայ ժողովրդի մտաւոր բարոյական ու ազգային վերածննդի սուրբ գործին և միաժամանակ հաստատուն պահել ու ամրացնել այն

բարոյական կապը, որ կայ Ամերիկեան Մեծ Դեմոկրատիայի ու վերածնուող Հայաստանի մէջ, յուսալով, որ պրոֆեսոր Ադալեանը իր Մայր Հայրենիքի վերածնդի ու ազատութեան գաղափարով ոգեորուած և գաղութիս ամբողջ հայութեան խրախոյսին արժանացած՝ իւր ամբողջ կարողութիւնն ու եռանդը կը գործադրի «Ամերիկա — Հայկական Համալսարանի» ազգօգուտ ձեռնարկութիւնը յաջողութեամբ պսակելու»։

Այս բանաձևն ընդունուելուց յետոյ պրոֆ. Ադալեանը իւր շնորհակալութիւնն է յայտնում Համ. Խորհրդին։

Համ. Խորհուրդը բուռն ծափահարութիւններով ընդունում է պրոֆեսորին, որից յետոյ Համ. Խորհրդի փ. նախագահը ժամանակի ուշ լինելուն պատճառով օրակարգի միւս հարցերը թողնում է յաջորդ ժողովին և փակում նիստը։

ՀՀ Ազգային գրադարան
NL0235630

54.282